

վելն, և տապկելն. յառաջն յիստակէ, և նոր պուտուկով տապկէ. և յայրենս, և նոր պուտուկով, կողքն ի կրակն դիր և տապկէ, և պուտուկն տաք. նայ, և դեղին հոտն ելանէ և է՛յայրի: Եւ զապիկին ի կրակն ձգելն որ այրի և կարմրի և քանի մի հնդ սս. աբա մինչև մանրի, և զքարերն այլապէս լուանան, ի յայնից դեղերն, որպէս թութիան՝ և շատնան, և զլէմբան, և որ նման է սոցա. յառաջն պիտի որ կամակէ՛ յիստակ ջրով ի հաւանն ձեծնէ, և քիչ ջուր լից և ի չինի աման փոխէ՝ և շրջէ՝ որ ամէնն ի ջուրն ելանէ և ի տակն նստի և առնուս և պահես: Եւ զմարգարիտն ք և զպէսէտն, իր ի մուֆարենն կու մտէ, այսպէս լուայ զպէսէտն, և զսատաֆն, և զքարուպան, որ որ սոցին նման է, զամէն մէկ ի նոր կնիճ դիր, և ի տիկի հնգմաթով ձեւ փէ, և ի տաք թոնիր դիր որ աղէկ այրի, և այն որ Խաղութն է, և եաշմն է, և որ նման է սոցա, ձեծնէ կու պիտի և ի պաղ ջուրն ձգել, և թասով պնէ: Եւ զսարատանն այրելի սս. է. յամոնան աւուրքն որ արեգակն ի յառիւծն մտել լինի, և զոտներն կտրեն, և զփորն յստակն և լուանան՝ և ի նոր պուտուկ դնեն և ձեւ փեն զքերտանն, որպէս յառաջն ստացի, և ի տաք թոնիր դնեն, և զկրակն քաշն ապա դնեն, որ մօխիբ չլինի՝ յայրեն և խորվի, և թէ յապիկին յամոն դնես այլ աղէկ լինի: Եւ զկորն որ ի մանուկն յախրապին մտէ, սս. այրել կու պիտի զկորն այրելն որպէս յառաջն յիշած է. ի շիշային մէջն դնել կու պիտի և հալած մոմ ի վրայ և Ժ. դր. ձէթին: Բ. դր. մոմ պիտի, և կամ Բ. և կէս պիտի. և զտիմէտինն սս. չիւնել կու պիտի, և զքամուքան, և զայլ դեղերն քիչ քիչ ի վրայ խառնէ իմում ըլուղանն, և հաւան ձեռօք հար աղէկ՝ և մահրամն, և տիւմէտն, այսպիսի կերպովս: Եւ ամենայն մում ըլուղան որ ամանն աւուրքն չինուի. Ժ. դր. ձէթ. Գ. դր. մոմ յիրար խառնէ. և մոման աւուրքն. Բ. դր. մոմ. Ժ. դր. ձէթ խառնէ: Եւ զձէթերուն չինելի սս. արայ. թէ հուղ է, և թէ խոտ է, որ ի ձէթերն մտնու, յառաջն ձար. ձատէ, և ի ջուրն դրջէ օր մի և զիշի մի, և ջուրն այնչափ պիտի, որ ծածկէ զդեղերն, և մէկ այլ օրն հոցու, և ձեռօք անէ և քամէ և խառնէ չիրիկ ձէթ՝ և հոցու՝ որ ջուրն երթայ և ձէթն մնայ: Եւ թէ դեղերն նուրբ լինի՝ զգեղն ի չինի աման դիր, և կամ ի շիշայի մէջ դիր՝ և զշիշան ի պուտուկն դիր, և ջրով հոցու որ եփի և քամէ, և դարձնալ ի շիշան դիր և ձէթ լից ի վերայ և հոցու որ ջուրն երթայ և ձէթն մնայ:


Հոս կ'աւարտի ամբողջ Յառաջաբանութիւնը, վերջը ունենալով կարևոր Յիշատակարան մը, որ Ամբողջովաթի տիպոգրները կը յայտնէ, և է՝ հետեւեալը:

« Եւ կատարիցաւ առաջաբանութիւն աղբաւ. « պատիւն՝ կամօքն Աստուծոյ, Եւ յիշեմ մէկ « քանի բան մի այլ թէ պատճառն ինչ է որ « այս առաջաբանութիւնս գրեցաւ. տեսայ Նս « անպիտան ծառայ աստուծոյ Ամբողջութեամբ, « ի թմականութեան հայոց, Այլ: ապրիլ ամ. « սոյ՝ ի Գ. ի տօնի աւետման օրերոյ Աստուա « ծածնին՝ ի վայրաքաղաքն ի կոստանդինուպո « լիս, և զտաք շատ աղբապատինի, որ գրած « էր հայոց լիզով, և զինչ որ կու յիշէին զայս « չինուած իրացս զպատճառն չի գիտէին՝ թէ « այս յէր էր, և զդեղերուն թապրալն չգիտէին, « և զինչ որ կու չինուէր չէր աղէկ՝ ի գործն « պակասութիւն կայր, և չէին գիտել զայս ա « ռաջաբանութիւնս, և մեք գրեցաք և յայտ « նեցաք, զի ով որ ի յայս արուեստս հետեի, « նայ իւր չինած դեղերն պակասութիւն չգտուի, « կամօքն Աստուծոյ, և զիս՝ հառապաշի՝ և « պօստանձի պաշի՝ յիշեցէք ի տէր »:

Հարկ չեմ տեսներ բացատրութիւններ տալ Յառաջաբանութեանց մէջ յիշուած դեղերու կամ բոյսերու մասին, երբ գիտենք թէ անմահն Հ. Ղ. Ալիշան իր « Հայբուսակ »-ին մէջ անոնց վրայ գրած է նոյն տեղեկութիւններ:

Բարիք 1927

ՏՈՐԹ. ՎԱՆԴԱՄ Գ. ԹՈՂՈՒՄԵԱՆ



ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ ԳՐԵԼԻՔ

Ա.

Թաղէտս Աղալբէկեան¹ փառաւոր Բիււզանդացւոյ հետեւալ խօսքերուն մէջ « Ըսա նապոյրն ընդ Եղչիրս և », գտնում է մի անմեղ պատասխան Մերութանի այս հարցմանը. « Ըսանապարսն ի Բագրեկանդ ընդ ո՞ր երթայ »: Եւ Միբուժանի զայրոյթն ուղեւորներին դէմ արդարացեցնու համար, Եղչիրս ուղղելու հարկ տեսած է, փոխելով յՄղորարս, Թեղադրելով զԳլուսն իւր ուրացութեան: Սակայն Աղալբէկեանի

1. « Հանդես Ամսօրեայ »ի 1926 թաւրայ 7-8 միասնալ Թուրքում, էջ 384-387:

կրկին մեկնութիւններ, ըստ մեզ չեն համապատասխանում ճշմարտութեան: Այնպէս պատասխանի համար քաջըջող և ծծծ չեն ուտեր. եթէ ծծծուեր են ուղեւորներն, ասել է խօսքի մէջ չարութիւն կայ, կծու և վիրաւորիչ՝ Մերութանի արժանապատուութեան, ժամանակակից մարդիկ որ նոյն կեանքն ապրել են Հայաստանի այն շատ նշանաւոր շրջանին, առանց դժուարութեան իսկոյն ըմբռնել են անմեղ պատասխանի սուր և թունալից իմաստն. մինչ մենք պէտք է այլ և այլ ենթադրութիւններ դիմենք, հաւատարմութիւններ տալով:

Մենք ալ վաղուց ուշ դարձուցած էինք այդ առեւտրային հակասութեան վրայ, և փոքր ի շատէ հետաքրքրութեան զոհացումն տալու համար, պրպտած էինք բնագիրն՝ ամբողջովին, Մերութանի կենսագրական տեղեկութիւններ գտնելու: Արդարեւ հետաքննելով Մերութանի կեանքը ուրացութենէն յետոյ մինչև իւր մահը, Զարեհաւան քաղաքի աւերակների մօտ, կալելի է գտնել դրուագներ, միջնակեալ դէպքեր, որոնք այլաբանօրէն կամ փոխաբերաբար կրնան առնչութիւն մ'ունենալ ուղեւորաց պատասխանին հետ և փոքր ի շատէ պարզեն իմաստը: Այդ ուղղութեամբ ուզում եմ երկու խօսք զրել լուսանցքի վրայ:

Արշակ Բ. և Շապուհի միջև կոխները երեսուն ձիգ տարիներ տեղեկին, որոց մէջ Մերութան ամէնատեղի դեր կատարեց: Շատերէն յիշենք համառօտութեան համար երեք միջադէպը, յորս Մերութանի դժպիտ դէմքն իւր շրջանակի մէջ դրուած է: Առաջինը՝ Արշակ թագաւորի գերութենէն յետոյ, Շապուհ կ'արշաւէ ի Հայս, և շատ մը քաղաքների հետ, աւերում է և ի հիմանց տապալում նաև Զարեհաւան քաղաքը՝ Բագրեանդի մէջ: Երկրորդ անգամ Շապուհ՝ վազան Մամիկոնեանի և Մերութան Արծրունւոյ առաջնորդութեամբ կուգայ և կը հասնի Բագրեանդ, և բանակը դնում է Զարեհաւան քաղաքի աւերակներին մօտ: Կողովիտ և Բագրեանդ գաւառներն բաժանուում են իրարուց լեռներով,

հաւանական է որ Զարեհաւանի մօտիկ լեռները, բնակիչները՝ նմանութեամբ մը Եղ. Ջեմալի՝ կոչեր են. և դրա մօտերն Շապուհ բանակելով, ամէն տեսակ և անուր խժըր-ժութիւններ գործում է, ամէն հասակի մարդու, կնիք և երեխաների վերայ՝ իրեն յատուկ վրան գարնելով ասպարէզին մօտ, քաղաքին մէջ: «Հրաման տայր ածել յաւապարզեք» արգատորդիք և նախարարներու կանայք և հարսներ, և նստեցնել ասպարէզին այս և այն կողմ... «և մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն»։ Հայաստանի ամենամեծ նախատինքն էր որ կը գործուէր Մերութանի գործակցութեամբ, և լրբարար ականատես կը լինէր իր հայրենակից և ազգակից կիներն և հարսներու պղծութեանց: Հայ ժողովուրդը բնաւ պիտի չամոռանար և պիտի չնեղէր ուրացող և դաւաճան ցուցաներին (հրէշ):

Երրորդ անգամ, միայն թշնամի բանակի զուխն անցած կը հասնի Կորճէից գաւառն, և հոն թողնում է բովանդակ պարսիկ զօրքն, և միայն ուրացողներու գունդն առած դիմում է Կորճիտ, սահմանակից Բագրեանդ գաւառին: Պարսկաստանից ռազմական երկու ճանապարհներն հարաւն և արեւելքն միանում էին Բագրեանդի մէջ: Առաջուց Մերութան լրտեսներ է ուղարկում ստուգելու Մանուկի բանակի տեղը, և գտնում են Զարեհաւան քաղաքի աւերակների մօտ նրա արօտական ձիերը: Լրտեսների բերած զրոյցէն Մերութան՝ «Խնդալից եղեալ՝ ասեր պարսնելով առաջի իւրոց զօրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կապեալ ընկեցեալ զՄանուէն, և յանդիման նմին զկին նորա վարդանոյ խաչտառակեալ իցէ»։ Ճիշդ այն տեղը և նոյն հանգամանքների մէջ, ինչ որ լրբարար Շապուհի հետ կատարած էին, տարիներ յառաջ, ոտնակոխ անելով Հայ կանանց պատիւն:

Մերութան արդէն ատելի և զգուելի

1. Մանուկի «Թուեցեալ»-ի մէջ Լեկոյի Լեւերեկ մասն էղիքը կոչուին:

եղած է Հայոց՝ մեծին և փոքրին իւր ուրացութեամբը, բայց աւելի անմարգարէ բարձրովն և անօրէն գնացըովը։ Ոչ ուրից նա այնքան ճանաչուած և ասուած էր քան թագրեանդի բնակիչներէից, որոնք ակա-նատես և ականջալուր եղած են չար մարդու գործածներին, որ ինքզինքն տուած էր Ձրադաշտական ուսմունքներին, ասում է Ռեզանդ նրա մասին՝ թէ հմայութեան, քաղէութեան, յուսութեան կախարհութեան սիրող և հետամուտ էր։ Այս ամէնը ծա-նօթ էր Հայ ժողովուրդին, որ երեսուն տարիներ հեծեր էր կոտորածների, արոյ և հրոյ արհաւիրքների տակ։

Մերութան մարմին վերայ երեկի պա-կասութիւն մի ևս ունէր, արուներ բարձի խեղութիւնը, որ զինքը ծիծաղելի կ'անէր ձի հեծնելիս։ Այդ խեղ նշանից միայն պիտի կարենան ճանաչել, Մանուէլն և Քարիկ Մինին, զՄերութանն Ձարեհա-ւանի կողմին մէջ, ինչպէս նաև կողովարի շարքաւոր ուղևորներն։

Մերութան արդէն ինքն շատ լաւ գիտէր և ճանաչէր այդ գաւառներն, որոնք Ար-շակունեաց տան պատկանում էին և ամէն հանդէսներ և սոնախորութիւնը կատար-ուում էին աշխարհախումբ աւագանւոյն, յորս առաջիններէն էր Արծրունեաց տա-նուտէրն, ինքն իսկ Մերութան։ Ուրացու-թեանն յառաջ բազմիցս անցել դարձել էր այդ տեղերէն ու այդ ճանապարհներէն. իսկ ուրացութենից յետոյ ինքն էր գի-տակ, հմուտ և տեղեակ առաջնորդը Շա-պուհի բանակին, ուստի պէտք չուներ ո'չ ոքին՝ իմանալու իւր գնալից ճանապարհն։ Իսկ ինչ նպատակի համար որ եկել էր, բռնելու Մանուէլն և խայտառակելու նրա կրին, դրս համար արդէն լրտեսներ ուղ-արկած էր և ստուգել էր Մանուէլի բա-նակի կացութիւնն և խնդալից եղած էր, որ որոշ ձեռքէ պիտի չփախցնէր, և շտա-պաւ գնում էր որ խոտաացածը կատարէ, « վաղիւ յայս ժամ » բռնէ կապէ զՄա-նուէլը. հետևապէս ուղևորներուն յանկարծ ճանապարհը հարցնելու՝ ո'չ պատճառ և ո'չ կարիք կար։

Արդէն եղջերք լերանց մօտերն են. Մերութան իւր մտքով կ'որոնայ Շապուհի հետ զործած զագրութիւններին, զուցէ և ինքն նկատելով որ ուղևորներն թագրեան-դեցի են կամ Մինիքից, իւր այնքնի լալիքը երեսով և վաւաշտ աչքերով, իրր անձանօթ մօտենալով ուղևորներին կա-խարհութեամբ հարցնում է ասելով. « Ճանապարհս ի թագրեանդ ընդ ո'ր եր-թայ »։ Այս հարցումն բոլորովին ծաղրա-կան և հեգնական է, իրր տնազ մ'է գոն, հիկ մարդոց միամտութեան վրայ. որով հետեւ Մերութան և ուղևորներն արդէն իրենց հանդէպն ունին թագրեանդը և հոն տանող ճանապարհի վրայ և ևս որեւէ ծանօթ իրենց անուններով. և գտնուում են բնակիչներէն կոչուած եղջերք լեռնե-րից ոչ շատ հեռու։

Սակայն միամիտ կարծած ուղևորներն աւելի սրամիտ գտնուեցան քան Ձրադաշտի աշակերտը և Մերութանի մտքի համա-ձայն՝ զայրոյթով պատասխանեցին. « Ճա-նապարհ ընդ եղջերս է »։ Դա ոչ եղջե-րած և լեռներն և ոչ գոմէշի և ցլու եղ-ջիւրներն է նշանակում. այլ փոխարեա-բար զուրցուածք մը, որ սովորական է ումիկ գիւղական մարդոց մէջ, գոեհիկ բառ մը, վերին աստիճան արհամարհա-կան ձև մը և նուաւստացոյցիչ պատուոյ։ Ուրիշ ազգերու մօտ ալ գտնուում է այդ գոեհիկ ձևն, փողոցային բառս, իտալա-ցիք corna (եղջիւր) են ասում։

« Եւ մեծապէս խորեաց Մերութանն ընդ միտս իւր, տրտմեցաւ ընդ բանսն »։ Մե-րութան իսկոյն հասկացաւ որ ուղևոր-ներն երկդիմի պատասխանել էին իրեն. ուստի մտքի մէջ քննեց, ճշդեց իմաստը, և գտաւ իրեն անարգական, վասն որոյ « տրտմեցաւ ընդ բանսն »։ Բայց ինչ եղած է ճիշտ միտք բանին, ասացինք, միայն ինքն Մերութանն և իւր ընկերակիցը կարող էին հասկանալ, իսկ մենք միայն հաւանօրէն պիտի ասենք, որ Մերութան 1^o. Հասկացաւ թէ նոցա անկարկում են Շապուհի հետ զործածները, յորում ոչ միայն կանանց թշնամանք զրին, այլ ըստ

իզամոլ անօրինաց «տրուր ընդ արուս զխալտառակութիւն զործեցին»։ 2⁰. Դրա-
դրածութիւն խեղ ոտքին, որ իբր եղջիւր
ցցուել էր թամրից դուրս, և ձին անոր
տակով ճամբէն կը տանէր։ 3⁰. Որովհետեւ
Մերութանի կոիւն եղած է յատկապէս
Մամիկոնեան և Սիւնեաց ցեղերու ղէմ,
և Սիւնեաց տոհմն չարաչար տուած է
Շապուհի կոիւնների մէջ, ուղևորներն գիտ-
նալով թէ՛ Մանուէլի և թէ՛ Բարիկ Սիւ-
նիի գերմարդկային քաջութիւնն, կամեցան
գուշակել Մերութանին որ այս երեցող
Եղջերը լեռներէն այն կողմն քո եղջիւր-
ները պիտի թափեն Մանուէլն և Բարիկ։
Այս պարտութեան զաղափարն տրտմեցուց
զինքը, որ պարծել էր ողջ բռնել կա-
պել Մանուէլը իւր ասած ժամուն։ Ուստի
այս անահ և համարձակ պատասխանի
վրայ՝ ձեծի քաշում է տիրասէր ուղևոր-
ները։ Յետոյ ինքն ճամբուց ելլելով ձիուց
վայր կ'իջնէ «ի համայն քաղէութեան,
զքուէս հարցանէր, և ոչ գոյր նմա յա-
ջողակ յուսուի կախարդանացն՝ յոր
յուսայրն»։ Ասկից ալ սիրտը սաստիկ նե-
ղուած, ուղևորներու գուշակութիւնն սուտ
հանելու համար իւր լրտեսներն առջևը
ձգած՝ կատաղաբար դիմում է ձիերու
արօտատեղին, զանոնք բռնելու համար,
որով Մանուէլի քանակի ողնայարն կո-
տրած կը լինէր, և յաղթութիւնը ապա-
հոված։ Սակայն այն բաղձանքին ևս չհա-
սաւ։ Գուժկան մը իմացուցել է Մանուէլին
Մերութանի զնդին հասնիլը, որ ինքն ևս
Աւան զիւղից դուրս գալով՝ հանդիպեցան
իրարու Զարեհաւանի մօտերու։

Մերութան խարդախութեան դիմում է,
միշտ սուտ հանելու ուղևորներու խօսքը
որ ատորաշէկ երկաթի պէս տաղեր և խա-
րէր է անօրէն ուրացողի սիրտը, իւր զէնքի
և սաղաարտի նշանները շատերուն կու
տայ, իսկ ինքն առանց նշանի ձգտած
պատերազմ կը մտնէ։

Մանուէլ զանոնք համարելով Մերու-

ժանը, մի քանիսր յերկիր տապալում է
և տեսնում որ նա չէ։ Այն ատեն Մա-
նուէլ ասում է Բարիկան. «Տեսանէս քանի
խաբհաց զմեզ կախարդն Մերութան. այլ
իմ և նորա՝ յառաջուց շատ լեալ ի միոջ
վայրի, ի հաշտութեան ժամանակի, եղան
մի գիտեմ ես զնորա. զի յորժամ ի ձի
հեծանէր, երան բարձի նորա ոչ յանձին
և ի ծունկն? ոչ հասանէր; այլ ի բացեալ
կայ ի ձիոյ անտի»։ Այս նշանից ճանաչե-
ցին ուղևորներն Մերութանը և անգոհնեցին,
Երկուքը վերջապէս կը յաջողին այլա-
կերպած Մերութանը ճանաչել, ձայն տա-
լով Մանուէլ ղէմ առ ղէմ ասոյեան կ'ելլէ
և կատաղաբար կը խաչուին իրար. եր-
կուքն ալ յաղթանդամ մարդիկ՝ ձիերնէն
վար կը զլորին. այդ վճռակաւ վայրկե-
սին կը հասնի Բարիկ և ձիու վրայէն
նիզակը զարնում է Մերութանի կողմն որ
թափ անցնելով միւս կողմ կը խրի գե-
տին, հոն կը թափին եղջիւրները և փչում
է սև հողին, յաղթանդամ մարմնով փռուած
Վարդանշիշի ոտքի տակ։

Բ.

Երկրորդ լուսարանութիւն մը՝ որ շատ
տեղին չ'երևար, տալիս է Հայկ Աճէմեան՝
և ասում է. «Վասպուրականի Հայ Ժո-
ղովրդի մէջ առած մը կայ, որ կ'ըսէ-
«ՔՈ ՈՏՔԸ՝ ՔՈ ԿՈՏՈՇ» այսինքն՝ քո
սարքած դաւադրութեան կամ կատարած
վատ գործի մէջ, լարած թակարդիդ մէջ
ինքդ ընկնես, այնպէս՝ ինչպէս, որ կուտող
գոմէշի կամ ցուլի ոտքը յանկարծ կը
մխրճուի?՝ իւր կոտորներու մէջ և կը
դատապարտուի պարտութեան »։

Սակայն այդ առածը ոչ թէ վասպու-
րականի այլ բոլոր Հայաստանի ժողովրդի
բերանն է, և ճշտագոյն ասում են. «Իր
ոտքը, իր կոտորն ինկաւ»։ Որ ոչ թէ
միայն դաւադրութեան, այլ և ինքն իրեն
բարի կամենալով փորձանքի մէջ կ'ինկ-
նայ մարդ, ինքն իր պատիժը գտաւ, կ'ըսեն։

1. «Հանդ. Ամս.» 1927 տարւոյ 3-4 միացեալ թուե-
րում, էջ 194-196.

2. «Մխրճիլ» բառն տեղին չէ, կը յանձնենք «Հան-
դէս Ամսորեայի» խմբ. ուղադրութեան։

Իսկ բերած օրինակի մէջ, Աճէմեանն հասկացուում է որ անտեղեակ է գիւղական կեանքին և ներկայ եղած չէ թէ ինչպէս գոմէշներ (կոտան ալ կ'ըսեն) և ցուլեր կը կոտին, կ'ողորին իրարու հետ: Ոչ մի տեղ տեսնուած չէ որ կոռուող եղջիւրաւոր անասուններու առջևի ոտքերն՝ իրենց կոտողն ինկնան (ոչ միտնուին): Վերադի կոռուող զոյգն գլուխ գլխի տուած փրակ կը մղեն չարաչար, եզնիբը եղջիւրները կը ցոնցեն, իսկ գոմէշները կը սառտեն. անոնց ջանք և ճիգն է խար տալով՝ առնել հակառակորդի կուշտն և կատաղութեամբ քշել կշտնկի մինչև որ հակառակորդն չկարենայով շակտիլ և գլուխն դժժ տալ, վար չգլորուելու համար ստիպուի թողուլ և փախչիլ, և արդէն պարտուած է փայտնակէն վերջ եզան՝ ցուլերը կը կանգնին, իսկ գոմէշներն կը հետապնդեն թշնամուոյն մինչև գետին տապալեն և փորը պատեն, եթէ չհասնին օգնութեան: Մարդերու համար, որք կոռէն վերջ դեռ չեն հանդարտի՝ կ'ըսեն «գոմջի հէրա է»:

Մերութանի համար կարելի պիտի լինէր ասել թէ «իբր ոտքը իր կոտողն ինկաւ»: Եթէ իւր պատիժն գտած լինէր պարսից ձեռքով, ինչպէս պատուհասեցաւ Վասակ-բայց մինչ նա գալիս է Հայաստան զօրքով կուռելու, հարկաւ կամ պիտի սպաննէ և կամ սպաննուի, ինչպէս պատահում է ամէն մահկանացուի: Արդարեւ Մերութանն ամէն կախարդութիւն ի գործ դնելէ յետոյ պատերազմի մէջ՝ մեկամարտութեան կը բռնուի Մանուէլի հետ: «Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերութանն՝ Մանուէլ... իսկ յորժամ զայն լսէր Մերութանն, անդէն վաղվադակի նիգակ առեալ, յառաջ խաղացեալ, ԱՌՅԵԱՆ ելանէր Մանուէլի: Սակայն յորժամ հարկանէին նիգակօքն, քանզի երկողքին արքն յաղթը էին, երկողքեան ի միոցն յերկիր անկանէին»: Մինչև ցայս վայր՝ հաւասար հաւասարի հետ է կոխ և Մերութանի ոտքն չմխրճեցաւ! Իւր կոտողներու մէջ, այլ կը շամիրուի՝ երբ

վրայ հասնում է Բարիկն և զայն նիգակ կոմն գետին կը կարէ: Այս պարտութենէն յետոյ կարելի է ասել՝ Մերութանն եկաւ իւր մահը փնտռելու և գտաւ հոն՝ ուր իւր պատին և փառքն մխրճեք էին Շապուհի սարքած աղտեղութեանց լճի մէջ և այս հետեանք է իւր ուրացութեանը, և Աստուած նրա զործած չարիքներն դարձուց իւր գլուխն և շանսատակ եղաւ կրօնքի և հայրենիքի հաւատարմի պաշտպանի ձեռքով:

Բայց ինչ է պատմութիւնն «իբր ոտքը իր կոտողն» ինկնալուն, ասենք Հայկ Աճէմեանին, թող ուրիշներն ալ իմանան: Այս է որ չորրորտանքը, գոմէշ, եզ, եղջերու և այլն, շատ անգամ ետևի ոտքով քորում են ականջկոթն և եղջիւրի արմատն: Պատահում է որ երբեմն ուժով քորելու ատեն կը սահի ոտքն և կ'ինկնայ եղջիւրի ետև, և փոքր մի շարժարուելոց յետոյ յաջողուում է հանել, բայց երբեմն չի յաջողիր և անասունը ինկնում է գէշ կերպով և կոտորում ոտքը: Որ է ասել մի անմեղ բանից մեծապէս տուժել: Ով ուրեմն դարան լարելով ուրիշին, իւր ձեռքով փորձանք կը պատրաստէ իւր գլխուն, անոր ասում են «իբր ոտքը իր կոտողն» ինկաւ: Եւ իսկապէս Մանուէլ երբ կը ճանաչէ ծպտած Մերութանը, մեծաձայն գոչում է. «Այ կախարդ, ցեբբ խաբես զմեզ»: և աւելացնում է. «Զի այս օր էսքան կատարեաց զչարիս քո՝ Տէր Աստուած՝ ի գլուխ քո, և մատնեաց Տէր ի ձեռս մեր»: Ուստի «Ճանապարհ ընդ եղջերս է» «Մինք տեսակ մը խիստ անէծք» չենք նկատում. այլ, թող վերև ասածնիս, շատ շատ ուղեորներն հայրենասիրութեամբ ուզած են մուրցնել զՄերութանը, սխալ ուղի ցոյց տալով, մինչև իրենք հասնին Բազդիանը և լուր տան Մանուէլի՝ մատնչին զազատագորի գալուստը երկրի խորը: Եւ անտի գութաւոր հասանէր առ զօրավարն Հայոց Մանուէլ թէ՛ Գիտեմ, տես, զի Մերութանն Արծրու նի հասեալ է բազում գնդաւ ի վերայ քո»:

Հ. Գ. Ն.